

տեսուած հայ մշակութային եւ կենցաղային նիւթերու մասին, որպէս տնական իրերու, կարգ ու սարքի, հիւսուածեղէններու, մետաղագործութեան, հազուատ կապուտի եւն., մեր շատ մը հին բառերուն իմաստը պիտի սրբազրեն ու փոխեն, այսինքն այն իմաստը՝ որ առ ի չգոյժ լաւագոյնի՝ մեր «բառագէտները» տուած են մեզի իրենց ոչ ամբողջական գործերուն մէջ:

Կը խորհիմ որ այդ ուղղութեամբ նպաստ մըն է սոյն աշխատութիւնս ալ: Հոս կայ նաեւ սրբազրութեան փորձեր նիւթերու մասին՝ որոնք դեռ ուսումնասիրական սարմնային վիճակին մէջ կը գտնուին, ինչպէս հայ ճաշը, նիստուկացը, տնայնական կահկարասին, եւն.:

#### Կ Ա Պ Ե Ր Տ

Կապերտ, ինչպէս ցոյց պիտի տամ, կը նշանակէ անխաւ գորգ, այսինքն գորգ մը՝ որուն երեսը եւ կոնակը հաւասարապէս տափակ է առանց գորգի մը թաւչային նմանութեան:

Մեր մատենագրութեան մէջ կապերտին կը հանդիպինք Ե դարուն: Թէ՛ Մարկոսի (Բ. 21) եւ թէ՛ Մատթէոսի (Թ. 16) Աւետարաններուն մէջ կը կարգանք. «ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ»:

Հայր Հացունի կապերտի մասին կը գրէ. «Կապերտ, — հաւանորէն կապ արմատէն, — որ կը նշանակէր պաստառի կտոր<sup>(1)</sup>, եւ ընդարձակ առմամբ մեր լեզուին՝ մարմնոյ վրայ կապելի հնոտի եւ փոքր հանդերձ: Դեռ զիմ կապերտսն ունիմ, ըսել կու տայ Ոսկերբանի թարգմանիչն օժիտ բերած կնոջ մը<sup>(2)</sup>. Եւ Պաւղոս, կ'ըսէ, եւ ոչ կապերտ անգամ գուտվի գտանէր արկանել<sup>(3)</sup>, իսկ այլուր կը շեշտէ տնանկաց կարօտը կապերտի միոջ ձորձոյ<sup>(4)</sup>, որոնք ձմեռն անդամ կապերտօքն<sup>(5)</sup> կ'անցընէին<sup>(6)</sup>»:

Հ. Հացունիի բացատրութիւնները անբաւական կը գտնեմ: Եթէ իրապէս իր բաժին համաձայն կապերտ կը նշանակէր մարմնոյ վրայ կապելի հնոտի եւ փոքր հանդերձ, արդ ի՞նչպէս բացատրել Մարկոսի Աւետարանին այն հատուածը, որ կ'ըսէ. «ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ»: Հոս որոշ է որ հնացեալ ձորձոյ տարբեր է կապերտ նորէն:

Յարգելի Հայրը կ'ուզէ որ օժիտ բերած կնոջ մը դեռ զիմ կապերտն ունիմ խօսքերը իր օժիտ բերած հանդերձաբլբլ նկատենք: Ան-

(1) Եսթ. ԺԴ, 16. Մատթ. Թ. 16. Ոսկ. Թղթ. Ա. 659:

(2) Ոսկ. Թղթ. Ա. 898. ըստ Յունարէնի զիմսն ագանիմ:

(3) Անդ. 208. Յն. ոչ իսկ գոր գանձամբ արկանիցէ՛ ունէր:

(4) Անդ. Բ. 504. Յն. մի բառ՝ հանդերձի:

(5) Անդ. 503. Ոսկ. Մատթ. Գ. 63. Յն. պատաստուն: (Մանթութիւնը 145

5 Հ. Հացունիի):

(6) Պատ. Հին Տարագի. — Ս. Ղազար, 1924, էջ 7: